«կրադործութեան. վաճառականութեան և ճարտարութեան ըրած յառաջադիմութեանց արդիւնքն են. այս յառաջադիմութիւնը ուսմանց և գիտութեանց ժողովրդեան մէջ ծաւալելուն, առեւտրական գործառնութեանց համար մատակարարուած դիւրութեանց, հաղորդակցութեան միջոցները հաստատուելուն և շատնալուն, գոյացած հարստութիւններուն խելացի և հմուտ կերպիւ գործածուելուն մէջ կ'կայանայ, և այս ամէնը հաւասարապէս արդարութի ըլլալու և ամէն մէկու շահերը՝ եւ իրաւունքները պաշտպանելու վստահութեան արդիւնքին հետ սերտիւ կապուած են։ Մեր անցեալը ճանչող եւ ներկայ վիճակնուս տեղեակ խելացի և ողջամիտ անձինք մեծ յառաջադիմութեան մը ձեռք բերուած ըլլալը չեն կրնար ուրանալ։ Սակայն ամենայնիւ այս յառաջադիմութիւնը պէտք է դրդէ մեզ որպէս զի մեր ջանքերը կրկնապատկենք մի և նոյն ճամբուն մէջ։ Սանց ակնարկութիւններս ետին դարձնելու, մեր տեսութիւնը հաստատենք շարունակ այն ճամբուն վրայ՝ որու մէջ պէտք է քալենք քաղաքակրթեալ մեծ ազգութեանց բարձրութեան հասնելու համար։

«Աստի առանց խտրութեան ազգի կամ կրօնի, Պետութեան խորհրդոյ անդամները նոյնպէս և Կայսրութեան բոլոր միւս Պաշտօնատարները կ'յորդորեմ սրտագին որ իւրաքանչիւրին մի և նոյն հայրենեաց զաւակները և մի և նոյն կառավարութեան անդամները համարելով այն սկզբանց ուղղոյն համեմատ զոր հիմա ձեզ յայտնեցի աշխատին միաբան երկրին օգտին և բարեկարգութեան համար, և մինչեւ մեր յառաջ դրուած ժողովը՝ կ'ուզեմ որ, նորանոր վերանորոգութիւններ շարունակուին իրենց, և կարելի եղածին չափ յառաջադիմութիւններ ձեռք բերուին։ Ներքնապէս համոզուած եմ, ըլլալով որ երկրի մը մէջ եթէ արդարութիւնը աղէկ կարգադրուած և օրէնքները աղէկ դիտուած չ'ըլլան անհատական իրաւունքը կատարելապէս ապահովուած չկրնար ըլլալ։ Ուստի մանաւորապէս և յատկապէս պէտք պատուէր տուած եմ որ ժամանակին պահանջմանց համաձայն մեր սուրբ օրինաց տրամադրութիւնները յատուկ դատագրքի մը մէջ ամփոփուին, դատարաններու վերակազմութիւնը և բարեկարգութիւնը լմնցնեն, և Կայսրութեան ամէն օրէնքները ճշդիւ և հաւասարութեամբ գործադրուելու համար անխոնջ ջանադիր ըլլան։

«Վերջապէս, անցեալ տարի մի և նոյն առթիւ ձեզ խօսածիս համաձայն, կ'փափաքիմ որ հասարակաց հայրենիքին երջանկութեան, բարեբաստութեան և փառաց համար ամէն մէկը իր բոլոր ջանքը նուիրէ»։

---

Պարտք կը համարենք օրագրիս մէջ զետեղել Իրաւունք պատուական լրագրի հետեւեալ շահաւէտ առաջարկութիւնն. ըստ բաղձանաց Արդշ խմբագրին մեր բանիմաց ազգայնոց ուշադրութիւնը և գործակցութիւնը խնդրելով։

## ՀՐԱՀԱՆԳԻՉ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Ընթերցօղ ներկայ վիճակը բարեկարգելու համար ի՞նչ բան մը ընել։

Այո, և այս՝ չէ թէ գանգատելով, չէ թէ բողոքելով, չէ թէ դատ-



digitised by A.R.A.R.@

ման չը յայտնող դժգոհութիւններով և այս տեսակ դրութիւններով, հա՛պա ժողովուրդը հրահանգելով, միտքերը լուսաւորելով, սիրտերը գրաւելով և միացընելով և այս նպատակին համար անընդհատ գործելով։

Տարածուած ազգ մը, ինչպէս է Հայոց ազգը, նաև չ'ամչնանք ըսել, ներքնապէս գէշ կառավարուած ազգ մը՝ ինչպէս է մեր ազգը, ուսումնականներու և տաղանդաւոր ազգայնոց աջակցութեան անհրաժեշտ պէտք ունի, այս աջակցութիւնը մեր առաջարկելիք միջոցով այնչափ դիւրին պիտի ըլլայ՝ որ անզգալի խոնջէնքէ մ'ետք զգալի արդիւնք մը պիտի արտադրի և ինչ որ մեր ազգի վիճակին մէջ տարիները հազիւ կրնար պիտի ըլլան ներգործել՝ ամիսները շատ դիւրաւ և հաստատ կերպիւ պիտի տպաւորեն ամեն մէկու մտքի և սրտի վրայ, բնական է որ գործելու կամք և անկեղծ սիրտ մը նաև փափաք ունենանք յառաջադիմելու։ Քանի որ տէրութեանց պատերազմական վիշտերէ և քաղաքական հոգերէ և զբաղումներէ ազատ է մեր ազգը՝ ինչու համար ժամանակ չ'ունենայ իր ներքին յառաջադիմութեան և բարեկարգութեան զբաղիլ և հիմնաւոր ձեռնարկ մը յառաջ տանիլ։ Մեզմէ պակասը ոչ ըստակ է և ոչ պաշտպանութիւն, ասոնց և ոչ մէկն է արգելք մեր յառաջադիմութեան. վիճակ մը բարելաւելու ոչ կամք կ' յայտնենք և ոչ միջոց մը կ'գըտնենք, և այս երկուքը բաւական են ազգերնուս վիճակը սեղմել և զանի նեղութեան և անբարեկարգութեան ենթարկել, հետեւաբար Հայուն յառաջադիմութեան արգելք՝ Հայը եղած է առանց դուրսէն թշնամի մը ունենալու։ Չ'կայ միջոց մը ազգերնուս մէջ մտքերը լուսաւորելու, գաղափարները յղկելու, ուսումը և գիտութիւնը աւելի զգալի կերպիւ տարածելու, սիրտերը միացնելու և յառաջադիմութեան ուղին բաց և արահետ ընելու. մենք կ'առաջարկենք և ամեն ազգայնոց ուշադրութեան և խորհրդածութեան կ' յանձնենք։

Ընկերութիւն մը կազմել Հրահանգիչ Ընկերութիւն անուամբ (կամ ուրիշ որ և է յարմարագոյն անուն մը) որուն կեդրոնը ըլլայ Զմիւռնիա եւ ճիւղեր ունենայ ամեն Հայաբնակ երկիրներ։ Այս ընկերութեան նպատակը ըլլայ.

Ա. Խօսարան մ'ունենալ ամեն տեղ որ ճիւղեր ունենայ, և այս խօսարաններու մէջ առանց կրօնական և քաղաքական վէճեր յուզելու՝ ուրիշ որ և է հրահանգիչ և կրթական նիւթերու վրայ ատենաբանութիւններ ըլլան 'ի ներկայութեան ունկնդրաց, կին կամ էրիկ մարդ անխտիր ընդունելով անվճար։

Բ. Այս ատենաբանութիւնները ամեն տեղ գտնուած խօսարաններու հաղորդուին և փոխանակուին, և որմէ վերջը հրատարակուին օրագրաց միջոցաւ։

Գ. Ամեն Հայաբնակ երկիրներու ուսումնականները և տաղանդաւորները այս ընկերութեան խորհրդական անդամներ ըլլան ընտրութեամբ։

Դ. Ընկերութիւնը ուսումնականները քաջալերէ, հեղինակները կամ թարգմանիչները վարձատրէ. անոնց աշխատութիւնները ծախու առնու կամ տպէ ընտրութեամբ և ծախու հանէ դիւրագին։

Ե. Ընկերութիւնը դասագիրք պատրաստէ եւ մատակարարէ ամեն դըպրոցներու համար դիւրագին. այս դասագիրքերը խորհրդական անդամներէ քննուած, սրբագրուած, նոյնպէս մին-

digitised by A.R.A.R.@

չէ՛ հինգ եղածներէ յարմարագոյն և օգտակարագոյն ճանչցուած ըլլան։

Զ. Ամէն Հայ դպրոցներ պարտաւոր ըլլան այս դասագիրքերը գործածել. նոյնպէս և ընկերութիւնը պարտաւոր ըլլայ բոլոր աղքատ աշակերտաց ձրի մատակարարել։

Է. Ընկերութիւնը իր գլխաւոր նպատակներէն մին սեպէ աշխարհաբառ լեզուն յղկել կանոնել, ճոխացընել և կոկել, և հոգ տանիլ բոլոր հրատարակութեանց կանոնաւոր և մաքուր ոճ բանեցնելնուն։

Ը. Ընկերութիւնը հոգ տանի աշխարհաբառ ճոխ բառարան մը շինել նոյնպէս Գաղղիարէն և Անգղիարէն լեզուներու, Հայերէնով մեկնեալ. հարուստ, ընտիր և կատարեալ բառաններ հրատարակել։

Թ. Ընկերութեան նպատակներուն մէջ ըլլայ կիսամսեայ կամ միամսեայ հանդէս մը հրատարակել մանուածրաբար դպրոցաց համար. այս հանդէսը տեսակ մի դասագիրք սեպուի և աշակերտք պարտաւոր ըլլան կարդալ և հրահանգուիլ։

Ժ. Ընկերութիւնը դպրոցաց համար միօրինակ, դիւրին և աշակերտաց դիւրըմբռնելի մեթոտ մը պատրաստէ և բոլոր այս տեսակ աշխատութիւնները ծախու առնու, երբ յարմար գտնուին, և հեղինակները քաջալերէ և վարձատրէ։

ԺԱ. Ընկերութեան նպատակներուն մէջ ըլլայ տպարան, նոյնպէս և ճեմարան մը հաստատել 'ի վերջոյ։

Սակայն այս նպատակաւ ընկերութիւն մը կազմելու համար անտարակոյս մեծկակ դրամագլուխ մը անհրաժեշտ պէտք կայ, այս դրամագլուխը ուսկէ՞ պիտի գոյանայ։ Ուստի առանց մէկէն 'ի մէկ վերը յիշուած նըպատակները գործադրելու անապա-ծութեան՝ աւելի օրինաւոր և օգտակար կ'ըլլայ նախ խօսարանը հաստատել և ատենաբանութեան ասպարէզը բանալով ժողովուրդը հրահանգել և ընկերութեան վրայ նպաստաւոր գաղափար մը տալ մինչև դրամագլխոյ մը մատակարարութիւնը և գոյանալը, որու համար հետևեալ միջոցը կ'առաջարկենք։

Ա. Ամէն Հայ՝ ընկերութեան անդամ սեպուին և վճարեն տարին միայն հինգ դահեկան, կամ մէկ և վերջին անգամուն համար մէկ Օսմանեան լիրա։ Անտարակոյս կամովին եղած նըուէրները շնորհակալութեամբ կ'ընդունուին և կ'արձանագրուին։

Բ. Այն անդամները արտօնութիւն ունենան խորհրդական անդամները իրենց երկիրներու մէջ իրենք ընտրել քուէիւ, և տարին անգամ մը ընկերութեան գործոց հաշիւը պահանջել։

Գ. Ընկերութեան հրատարակած ամէն գիրքերը արտօնութիւն ունենան ապրանք եղած գնով ծախու առնուլ միայն հարիւրին տասն շահ թողլով ընկերութեան գանձուն։

Դ. Ընկերութեան գանձապետը իրենք ընտրել որ պարտաւոր ըլլայ կանոնադրութեանց և ժողովոյ որոշմանց հպատակիլ։

Այն ընկերութեան նպատակները մեծագոյն մասամբ նշանակելէս ետև բռնելիք ընթացքը բացատրելէս ետև, անկէ առաջադրելիք արդեանց վըրայ խօսիլ աւելորդ կ'սեպեմ քանի որ գործը ինքնին կ'յայտնէ։ Կեդրոնական ժողովոյ համար ընդհանուր կանոնադրութիւն մը նոյնպէս և միօրինակ ներքին կանոնադրութիւն մը կըրնան պատրաստուիլ վերը յիշուած բակզանց վրայ, և թերևս աւելի օգտակար կ'ըլլայ այն ընկերութիւնը ընդհանուր ազգի և՛ւ կառավարութեան պաշտպանութեան տակ դնել։

digitised by A.R.A.R.@